

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«\_\_\_» \_\_\_\_\_ 2018 թվական

N \_\_\_-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 26-Ի N 462 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 26-ի «Արցախի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 462 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի աղյուսակում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

« 6. 

Քաշաթաղի տարածքային ներկայացուցչություն
---

 »:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 26-Ի N 462 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center"><b>Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքը</b></p>
	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 26-ի N 462 որոշման մեջ լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ առաջարկվում է «Արցախի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքային ներկայացուցչությունների ցանկում լրացնել Քաշաթաղի տարածքային ներկայացուցչության անվանումը:</p>
2.	<p align="center"><b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b></p>
	<p>Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժին</p>

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ